է. — բոլորն ալ կուլան . . . : Ընուն մի կհրատարակուի որպէս երբեմն ուսումնարանի մէջ. այդ անունն՝ Յան Վ՝ ԺԺեսյին էր:

Բայց պատանին արդէն եղել էր կատարեալ այր: — Պատկը, որ կղարդարէր նորա ճակատը, նոր կենաց մէջ մտած ժամանակը . . . փոխուեցաւ ազնիւ քաղաքացւոյ պատկի:

Նա կելնէ ամբիոնի վերայ . . . կլսուի ծափահարութիւն . . . : Բայց նա անտարբերութեամբ կլսէ այդ հասարակաց գովասանական բոլոր բեմբասացութիւնը, նա կորոնէ մէկուն, նորա աչքերը դէպ ի դահլիճի անկիւնը ուղղուած՝ կնկատէին խեղճ և ալեւոր կնոջ մի, որ հազիւ հազ կարողանար կենալ ոտից վերայ, որոյ թոյլ ուժը կենդանացած էր միայն իւր առնազելի որդին ունեցած սրբազան սիրովը, — նա իւր դողդոջուն ձեռքերը երկնցուցած դէպ ի որդին կդրուցէ առաջուան պէս,

— Ստու

՜ծ օրհնէ զքեզ . . . իմ բարի որդիս . . . քեզմով միայն երջանիկ էր իմ կեանքս:

Թ՝ՐՔ՝ Ի ՌՈՍԷԷՆԷ
ԼՈՒՍԻԱ Մ՝ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ՝
Ի ԳԷՔՔԷՐԷՈՆՔՈՒԼԷ:

ԱԶԳԱՅԻՆ

ԿՈՆԴԱԿ՝ — ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ — ՀՐԱՀԱՆԳ՝ — ՅՈՒՅԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ՝ — ԴԱՐՁԵԱԼ ԿՈՆԴԱԿ՝

Ինչպէս որ անցեալ Ամսագրի մէջ խոստացուեցաւ, տհաւասիկ ներկայ Թուոյս մէջ՝ Վ՝ԼԿ՝ Հայրապետի՝ Ն՝ԵՄԱՐԱՆԻ բացման ժամանակը ծանուցանելոյ և տաշակերտները պահանջելոյ համար ի վիճակս ուղղած Կոնդակին՝ Ն՝ԵՄԱՐԱՆԻ Հիմնական Ծրագրին, պահանջեալ աշակերտաց համար կարեւոր եղած Հրահանգին, աշակերտ պահանջուած տեղեաց և կողմանց ցուցակին, ևս ի վիճակս խրկուած երեք հաւաքիչ Վարդապետաց ի ձեռս նուիրահաւաքութեան համար յանձնուած տումարին ի ճակատ եղած Կոնդակին կարեւոր պարբերութեանց պատճէնները, կիրութամբ հրատարակել ի գիտութիւն և ի տեղեկութիւն համայն սիրելի եղբարց մերոց:

— Նաև տոտ աւելորդ չէ յիշել, որ հիմնական Ծրագրին մէջ նշանակեալ երկու լեզուաց և երկու առարկայից դասաւանդութիւնքը առայժմ պարտաւորիչ չեն Ն՝ԵՄԱՐԱՆԻ առաջին շրջանի մէջ: —

Ա՝հաւասիկ Կոնդակը

" . . . . Օ՜ի՝ եթէ աղդային բանասէր ոք առ սէր ծանօթութեան ընդ նախասկիզբն հեղինակաց մտաւոր և բարոյական զարդացման Հայազնեայ եղբարց իւրոց ուշի ուշով յակն արկանիցէ զգիրս պատմութեան իւրոց նախահարց՝ անդստին յօրէ ծագման ի մեզ Քրիստոնէական հաւատոյ կենսագործ լուսոյ վարդապետութեան, կամ եթէ կամիցի ոք զոյդ ընդ հետաքննութեանս ընդ այսմիկ ի միտ առնուլ միանգամայն զընթացս ուսումնական դասախարակութեան Ազգիս յայլ և այլ շրջանս քաղաքական կենաց նորա՝ խաղամուտ լինելոյ աղագաւ՝ թէ ո՞ւմ ուրեք պարտ իցէ ի նախնեաց շնորհապարտ զանձն խոստովանել վասն մշակութեան և անկորուստ պահպանութեան հայացի բարբառոյ և դպրութեան, ապաքէն յայն-

պիտոյն աչաց տեսութենէ չկարեն խուսափել մեծամեծ երախտիք եկեղեցականացն դասու, որոց ոչ միայն ընդ կատարելագործութիւն գեղեցկայարմար գրոց Հայկական լեզուիս պարտական եմք, այլ և նոցայն ուսումնական շնորհաց արդիւնք լինելով համօրէն ամենայն պատմական և Աստուածաբանական մատենագրութեանց մերոց նշխարք, յորոց սակաւք քան զբազումս դժբախտաբար զերծեալ հասեալ են առ մեզ՝ ի պատճառս յոգնատեսակ արկածից անցելոց ժամանակաց, անշուշտ եթէ բանասէրն այն և եթէ ամենեքեանքս առհասարակ պարտիմք եկեղեցականացն մերոց արիաջան վաստակոց վերագրել զսկզբնական պատճառս մտաւոր և բարոյական զարգացման Ազգիս մերոյ, և ըստ նոսա խոստովանել իմաստուն խնամակալս Լեզուի և Կրօնի ընդ ամենայն ժամանակս պատմական և քաղաքական կենաց մերոց։

Իսկ արդ՝ քանզի եկեղեցականք յաւէտ գուն գործեալ են ի հնումն յառաջադիմութեան ազգային դաստիարակութեան, և ըստ հոգևոր նշանակութեան իւրեանց՝ փրկարար ազդեցութիւնն այն բարոյապէս ներգործելոյ ի բարօրութիւն ժողովրդեան կատարելապէս յաջողեալէ նոցա, ապա ուրեմն անհրաժեշտ հարկ ի վերայ մեր կայ հսկել յարաժամ ի վերայ վայելուչ դաստիարակութեան նոցին իսկ եկեղեցականաց. զի մի՛ յանգունդս ագիտութեան զառածանիցին, և յայն քարշեցեն ընդ իւրեանս և զլրութիւն Ազգիս, այր դաստիարակութիւն և պահպանութիւն՝ յետ բառնալոյ քաղաքական կենաց մերոց՝ դարձեալ նոցայն հաւատացեալ է տեսչութեան։

Յաւիտք ասել, բայց ի հարկէ իրացն ստիպեալ մեծաձայն խոստովանիմք թէ՝ արդարև ի յետին ժամանակս ընդ պակասել ուսումնասէր բարոյից եկեղեցականաց մերոց՝ կարճեցաւ նաև Ազգիս մերոյ յառաջադիմութիւն յուսմունս գիտութեանց. և քանզի եկեղեցականք մեր յետնեալք գտանին և զերկիր ընդհանրապէս ի պէսպէս հոգևոր և բարոյական կատարելութեանց առաջնոցն եկեղեցականաց, անծանօթք կենցաղոգուս ուսմանց և լեզուագիտութեանց, ուստի չեն ինչ զարմանք՝ զի և ազգն մեր տակաւին ի տգիտութեան թարթափի ըստ օրինակի հոգևոր դաստիարակաց իւրոց և Առաջնորդաց։

Ի դէպ դայ մեզ ասասանօր ի մէջ բերել զստուգագոյն բանս խորհրդածութեանց միոյ ուրուք երանաշնորհ հարց Արբոյ Եկեղեցւոյ՝ գեղեցիկ ինն յարմարեալս նաև արդեան վիճակի մերայնոցն տգիտութեան թէ՝ ‘‘Վասն զի եղև քահանայն իբրև զմի ի ժողովրդենէն, վասն զի կրօնաւորք քաղաքականաց վարուք վարին, վասն զի ոչ զանազանին ի միմեանց վանականք և աշխարհականք, այլ ամենեքեան խոտորեցաք, ի միասին անպիտանացաք, խըստացուցաք զպարանոց մեր և ոչ խոնարհեցաք, ստունգանեցաք պատուիրանի Տեառն և ոչ զոյնացաք, այլ դարձաք որդիք մերովք Յեդիպտոս,,՝ այլովքն հանդերձ։

Ամենիրի մեք հարկ համարիմք հաստատուն ինն եղանակաւ բուռն հարկանել զառաջինն զհոգևոր դաստիարակութենէ եկեղեցականաց մերոց, յորոց դարձեալ պարտ է ակն ունել ի ժամանակին յա-

ռաջադիմութեան Աղգիս ի կարևոր ուսմունս Աստուծոյ և լեզուի։ Իսկ առ այն թէ՝ ի ձեռնացեալ ժամանակիս քանիո՞ն կարևոր է մեզ ունել զուսումնական հովիւս և միակս ի պայծառութիւն Սրբոյ Եկեղեցւոյ՝ չեն ինչ պէտք երկարաբան ապացուցութեանց, իբրև զի նուազութիւն բարեպաշտութեան և Աստուածապաշտութեան ի միջի Աղգայնոցս, բազմադիմի մեղանչանք ընդդէմ Աստուածադիր պարտուց Քրիստոնէական սուրբ հաւատոյ, յաճախմունք նորանոր որոգայթից ի սարտուցանել զպարզամիտս և զդիւրահաւանս ի հաւատոյն հաստատութենէ, անշքութիւն եկեղեցեաց և վանօրէից, բազմութիւնք պէսպէս կրօտական ախտից և մոլութեանց, միթէ չիցե՞ն այսոքիկ ակնյայտնի ապացոյցք անփութութեան՝ և որ մեծն է՝ անգիտութեան եկեղեցականաց և աշխարհականաց առհասարակ պարտուց իւրեանց, և հետևանք սահեալ զոլոյ իւրաքանչիւրոցն և զսուց յանդունդս ագիտութեան։

«Ո՛չ կամիմ եթէ ոգէտք իցէք, եղբարք», զոչէ աւագափոր ազդարար փողն առաքելական, և զնոյն հնչեցուցանեն ի լսելիս մեր իմաստասէր Աստուածաբան Սրբոյ Եկեղեցւոյս Աստուծոյ բազմակերպ բանիւք և օրինակօք։ «Ծաներ՛ուք, ասէ մեծագործ Աստուածաբան Եկեղեցւոյ մերոյ Սահակ Պարթև, զի որպէս կուրութիւն աչաց ատելի է մարմնոյն, նոյնպէս և ագիտութիւն ոգւոյ ատելի է Աստուծոյ, մանաւանդ քահանայից»։ Եւ եթէ առ ժողովուրդն և առ քահանայս այսչափ, որչափի առաւել խստագոյն պարտին լինել պահանջք գիտութեան ի վարդապետաց, յեպիսկոպոսաց և յամենից անձանց առհասարակ՝ որոց ուխտեալ իցէ ի կոչումն մտեալ կուսակրօնութեան՝ և աւանդապահ լինել յաւէտ վարդապետութեանց Եկեղեցւոյ։

Զմտաւ ածելով մեր զայս ամենայն՝ և տեսեալ զի չի՛ք այլ իմն յարմարագոյն ճանապարհ ելից ի ագիտութեան խորխորատէն, յոր կործանեալքս եմք վասն մերոյ իսկ անուսումնասէր բարոյից, բայց զի բանալ հեղհեղեալ ըստ օրինակի այլոց ազգաց զԴպրոցս լուսաւորութեան, վասն որոյ յորմէ հետէ ամբարձաք ի գերագահ Աթոռս Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Մեծի Պարթևի, անձանձրոյթ իմն սիրով՝ ձեռն արկաք ի բացումն Հոգևոր Դպրանոցաց ի վանորայս և դպրոցաց առ իւրաքանչիւր եկեղեցեաւ ըստ քաղաքաց քաղաքաց և գիւղօրէից ի բազում տեղիս Հայաստան աշխարհիս, փոյթ ի մէջ կալաք ի տեղիս տեղիս հաստատութեան Թանման Դպրանոցաց, և ըստ մերոյսանն կարի ջանադիր եղաք ի բարեկարգ պայման կառավարութեան զարդէն եղեալսն վերածելոյ, որոյ վասն զկարևոր կանոնս և զկանոնադրութիւնս տպագրութեամբ հրատարակելոյ չգտաք յանհոգս՝ առաջի աչաց ունելով զոգուան սիրեցեալ Աղգիս և եկեղեցւոյ։

Բայց այսու ամենայնիւ միթէ ունի՞ցի՞ք իրաւունս ասելոյ զազգային Դպրոցաց մերոց՝ եթէ չունին նոքին այլ ևս կարօտութիւն պէսպէս բարեկարգութեանց, ապաքէն ո՛չ, այլ մանաւանդ պարտիմք խոստովանել թէ՝ սիրախնամ հոգատարութիւնք մեր զնոցայն յառաջադիմութենէ՝ յերևան հանեն զայլ բազ-

մատեսակ անհրաժեշտ պիտոյս, որոց կատարման պարտ է մեզ փոյթ ունել յարաժամ՝ եթէ կամիցիմք հաստատիմն կացուցանել զյարատեւակ գոյութիւն նոցին այժմ և յապագային։

Հնարհ մեծ ունիմք զսիրեցեալ Աղգիս մերմէ՝ զի ի կարեւոր դէպս յօգն մեզ հասանէ նիւթական ձեռնտուութեամբ իւրով ի լրումն բարեսէր նպատակաց մերոց, և ի նոցայն աջակցութիւն յամենայնի զյոյս մեր բեւեռեալ գործեմք յաւէտ՝ զոր գործեմքս և զորս մինչև ցայսօր գործեցաք։

Ուանիկ տեսեալ մեր զանհրաժեշտ իմն կարեւորութիւն բարձրագոյն ուսմանց Դպրանոցի իրիք, զորոյ զկառուցումն կարեւոր ծանուցեալ և մերոցն նախորդաց՝ անգիտանամք թէ էր սակս ձեռնթափ յեռոյ լեալ է նոցա յիրագործութենէն, իսկ մեր յուսացեալ բոլորովին յԱստուած, յաջողեցաք վերջապէս յաւարտ ածել այսօր զհոյակապ շինութիւնն զայն, զոր է կազմեցաք Ա՛եմարան Ժառանգաւորաց Սրբոյ Էջմիածնի, ի մտի եդեալ գտարաստել ի նմա զարժանաւոր կուսակրօն եկեղեցականս։

Ցաւելորդացն սակի համարիմք ասել զիշատակել զայն ամենայն բազմատեսակ դժուարութիւնս և զբարոյական ինչ ինչ արգելարիթ հանգամանս՝ զորոց դէպ ելեւ մեզ զդիմի հարկանել մինչև յաջողեցաւ վախճանական կառուցումն Ա՛եմարանիս, բայց ոչ նոյնպէս լռութեամբ խորհիմք անցանել զյիշատակութենէ պարտաւորութեանց, զոր ունի Ա՛եմարանս մեր առ Աղգս, և փոխադարձաբար հարկ ի մերոյ ազգայնոց կայ ունել առ Ա՛եմարան. ըստ որում որպէս Աթոռս Երարատեան համազգային համարի, նոյնպէս և Ա՛եմարանս նորակառոյց իրրև ազգային ընդհանուր սեփականութիւն և ապրիւր դաստիարակութեան համարի ընդհանուր եկեղեցականութեան Աղգիս։

Իսկ արդ՝ որպէս ի վեր անդր կանխեցաք ասել, գլխաւոր նպատակ Ա՛եմարանիս է՝ ընծայել լրութեան Աղգիս զկուսակրօն եկեղեցականս, բայց զայնպիսիս ոմանս՝ որք զարդարեալք բարձրագոյն ուսմամբք կրօնական գիտելեաց և կարեւորացն աշխարհականաց լեզուաց և գիտութեանց, կրթիցին և զարդանայցին ամենայն Աստուածահաճոյ վարուք և հաւատոյ վայելչութեամբք լցեալք՝ պատրաստեալք և ամենայնալք՝ և յաւարտ ուսմանցն ելանիցեն ի հանդէս Աղգային հոգեւոր դաստիարակութեան առ ի սերմանել և տարածել առատօրէն զճշմարիտ վարդապետութիւնս Հայրապետն Աստուածատուրս Կրօնի և դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց, արմատաբիր քանցելով հանելով յազգային անդաստանէ զորոմունս նորահնար եկամուտ զբնասակար մոլութեանց և սովորութեանց, առ ի բանալ հեղգնեալ զազգային դրպրոցս և յաւելուլ յԱղգիս մերում զթիւ հոգեւոր դաստիարակաց, բանիրուն քարոզչաց, քաղցրուսոյց վարդապետաց, բարեսէր գպրապետաց, արիասիրտ հովուաց, մեծարգոյ իմաստասիրաց, համառօտ ասել՝ ի բարեպաշտ վարս կրթեալ և կարեւոր ուսմամբք պերճացեալ եկեղեցականաց և ուսուցիչ վարժապետաց։

Հայոցիկ ահա լինելոց են պարտք ուշակիրաելոցն ի Ա՛եմարանիս առ սիրելի

ցեալ Աղգս մեր, որ յիւրմէ կողմանէ համարելով զՆ՚եմարանս զայս իբրև զնոր բարոզչաց ամրապինդ շաղկապ կրօնական և ազգային միութեան իւրոյ ընդ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի՝ պարտի անտարակոյս չլինել անտարբեր յառաջադիմութեան սորին, այլ մանաւանդ արժանի առնել զսա սիրալիր համակրութեան իւրոյ և ի կարևոր դէպս պարտ և պատշաճն ձեռնտուութեան, հայել յայս քաղցրագութ աչօք խնամակալութեան որպէս ի ծառ ինչ նորատունկ՝ կենդանացուցիչ զօրութեան ազգային հոգևոր դաստիարակութեան և լցուցիչ պիտոյից Աղգի և Եկեղեցւոյ, ուստի պահպանել զայն ի խորշակահարութենէ և յայլոց վնասաբեր արկածից, հեղլով ի նա՝ ըստ պահանջման հարկին՝ առատահոս վտակք ազգասիրութեան զտուրս կամաւոր օժանդակութեան և խնամոց, որպէս զի սաղարթատարածեալ և պտղալից ուռճացեալ հասատարմատ ծաղկեսցի յաւէտ ի փոքու հայկական անդաստանիս մերում։

Յուսալով թէ փոքր ի շատէ բաւեցաք ղղացուցանել սիրելեացդ իմոց զընդհանուր նպատակ Ն՚եմարանիս և զփոխադարձ պարտս միմեանց՝ Աղգիս և Ն՚եմարանի, պարտ համարիմք յաւելուլ և զայս մի ինչ՝ թէ աջակցութիւն եկեղեցականաց և աշխարհականաց ի կատարումն բարեսէր նպատակի իրիք լեալ է յաւէտ յորդառատ աղբիւր յառաջադիմութեան, և զնորին հակառակն՝ որոշումն ի միմեանց երկոցունցս յազգային և յընդհանրաշահ խնդիրս՝ տեղի տուեալ է հանապազ պէս-պէս տարաձայնութեանց, երկպառակութեանց և յիտամեացութեանց։

Արդ՝ կամելով մեր իրադործել զյառաջադրեալս զայս նպատակ ի բացումն հոգևոր Ն՚եմարանիս յառաջիկայ ամսեանն Սեպտեմբերի անպատճառ, թէպէտ ցաւ է մեզ զի ըստ կանխագիտեցեալ պատուիրանաց մերոց չեն այնպէս արդիւնաւորեալք թեմական, Վանական, և Վիճակային զպրոցք, որք պարտէին լինել իբրև նախակրթարանք Ն՚եմարանիս, այլ քանզի ժամանակն թանկագին սահի անդադար և կորուստ նորին վնասաբեր լինի յառաջադիմութեան եկեղեցւոյ ՝ այսց, ուստի ընտրեցաք զմիջին իմն ճանապարհ, որով յաջողեսցի մեզ ապաքէն պահել զնպատակն ազգօգուտ՝ թէ և այն ևս ոչ առանց թեթև ծախուց և սակաւ դժուարութեանց, այն է որոշեցաք յատկապէս առաքել ասի . . . . .

Վարդապետ, որպէս զի սա որոշեսցէ յընտրելոցն զարժանաւորսն ըստ՝ բահանդիս և առաքեսցէ այսր ի Սուրբ Էջմիածին, նա և զիտակ արասցէ զաղգայինս մեր ներքին տնտեսական կառավարութեան Ն՚եմարանի. քանզի չկարեմք ծածկել բնաւ ի հասարակաց գիտութենէ զայն ամենայն՝ որ ինչ վերաբերի ի յարատևութիւն սորին, այլ մանաւանդ հրաւիրեմք զիւրաքանչիւր անհատ ազգային ձեռնտու լինել մեզ ըստ կարեաց յայսմիկ ընդհանրաշահ գործոյս եթէ խորհրդով բանից և եթէ այլ կարևոր միջոցաք բարեգործութեան։

Քանզի զտան յազգայինս մեր բարեմիտ անձինք, որք ցանկալով նպաստել յառաջադիմութեան Ն՚եմարանիս՝ նաստանուով իւրեանց խնդրեցին ի մէջ տեղի կութիւն զանազանաց օժանդակութեան։

Մեք զչափ և զտեսակ օժանդակութեանց թողեալ եմք ի կամս նուիրատուին, և հարկ համարիմք ծանուցանել, զի ամենայն ծախք ուսմանց և սննդեան Դասանգաւորաց Ն'եմարանիս լինելոց են ի Գանձարանէ Սրբոյ Աթոռոյս. միայն եթէ ցանկանայցէ ոք ընդունել յիւր վերայ ազգասիրաբար զծախս միոյ ուրուք ժառանգաւորի, այնպիսին ամի ամի պարտի հատուցանել ի գին որդեգրութեան բուրլիս արծաթոյ 300՝ կամ յինքենէ ուղղակի և կամ ընդ ձեռն տեղական Առաջնորդաց հասուցանելով զայն ի Գանձարան Սրբոյ Աթոռոյս, իսկ զընտրութիւն որդեգրին վերապահեմք մեզ և թեմական Առաջնորդացն մերոց նկատողութեան։ Հնորհակալու մտօք յայտ առնեմք և զայն՝ զի եղեն նա և այնպիսի բարերարք, որք ի յաւերժական յիշատակ անուանց իւրեանց և բարեգործութեանց առատաձեռնեցին ի Գանձարան Սրբոյ Աթոռոյս զպանքական տոմսակս և զմշանջենաւոր դրամագլուխս, զորս մտադիր եմք հետզհետէ տպագրութեամբ ի լոյս ընծայել, իսկ զանուանս նոցին արձանագրեցաք այժմէն ի յիշատակարանս ազգասէր բարերարաց Սրբոյ Աթոռոյս և նոր բակառոյց Ն'եմարանիս։

Լիայոյս գոլով՝ զի սիրեցեալ որդիք մեր համայն և ազգս Հայոց ուրախութեամբ սրտի պատրաստ է ընդունել և սիրալիր համակրութեամբ պսակել զընդհանրաշահ ձեռնարկս մեր՝ յամենայնի լեալ մեզ աջակից և խորհրդատու՝ վառեալ սիրով միութեան ընդ բազմադարեան կեդրոն լուսածին հաւատոյ իւրոյ և կրօնի աւանդելոյ մեզ ի սրբազան Առաքելոցն մերոց Թադէոսէ և Բարդուղիմեայ և յառաքելասարաս առնէն Աստուծոյ ի սրբոյն Գրիգորէ Պարթևէ, խնդրեմք ի ձէնջ՝ սիրեցեալ որդիակք իմ, զի ուր ուրեք և դասանիջիք վտարեալ ըստ մարմնոյ բերմամբ արկածից ժամանակաց՝ ըստ հոգւոց ձերոց ջերմեռանդութեան փութասջիք միաբանել սերտ սրտիւ և անլուծանելի շաղկապաւ միութեան ընդ Մօրս հասարակաց սրբոյ Էջմիածնի, ոչ դարձուցանելով բնաւ զաչս մտաց ձերոց ի հոգեորաց աստի գանձուց փրկութեան և դասատիրակութեան։ Իսկ մեք այսու Հայրապետական Կոնդակաւ մերով մաղթեմք յամենառատ Խարէրեալոյն շնորհել Հոգ և Մեղ զօրութիւն և զյաջողութիւն միաբանական սիրով շահատակելոյ ի յառաջադիմութիւն ընդհանրութեան ազգիս և մերս այս Ն'եմարանի, զոր վահանափակ արարեալ սիրոյ մերոյ առաւելուխ եամբ յերևելի և յաներևոյթ որոգայթից թշնամեաց՝ կարող լիցուք զակընկալեալն ի նմանէ քաղել տակաւ առ տակաւ զբազմաբեղուն հունձս ճշմարիտ կրթութեան և դասատիրակութեան Ազգիս առ յապագայն ի Ջահս հաւատոյ, յուսոյ և սիրոյ, և Երարչին ամենեցուն մատուցուք զլիաբերան գոհութիւն և զփառս յաւիտեանս յաւիտենից, ամէն։ ,,

---

ՀԱՄԱՌՕՏ
ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Ա. Նպատակ ճեմարանի Ս. Էջմիածնի է՝ պատրաստել զկուսակրօն եկեղեցականս բարեկիրթս եւ քաջահմուտս Եկեղեցական եւ Աստուածաբանական